մէջ։ Նմոյշի համար յիշենք թէկուզ Իսրայէլ Օրիի 1701 թ. Յուլիս 29-ի ցուցմունքը ռուսաց արքունիքում, ըստ որում Հայաստանի ազատութեան գործում նրա գլխաւոր աջակիցներն են երկու եղուիտ քարոզիչներ — պատէր Վոյֆը՝ գերմանական կայսեր արքունիքում եւ պատէր Պոտիէն՝ Պֆալցի իշխանի մօտ1)։

Այսպէս ուրեմն, հայ քաղաքական միտքը, մի չարք հասկանալի պատճառներով, ամբողջ մէկ ու կէս դար յածում է Արեւմուտքում եւ Հայաստանի ազատութիւնը եւրոպական արքունիքում որոնում—սկսած Ստեփաննոս կաթողիկոս Սալմաստեցու Հռոմի մեկնումից (1548 թիւ) մինչեւ Իսրայէլ Օրիի գործունէութեան առաջին շրջանը, 1700-ական թուականները։

Հայոց կողմից, գլխաւորապէս Էջմիածնի կաթողիկոսների անունից, կատարւում են անվերջ դիմումներ, ուղարկւում են պատգամաւորութիւններ, ընծաներ, գրւում են աղերսագրեր եւայլն։ Պատասխանը շարունակ լինում է հաւաստիացումներ, յուսադրումներ, քաղցր խոստումներ։ Բայց կեանքը գնում է իր ճանապարհով եւ հայ ժողովրդի ստրկութիւնը մահմեդական լծի տակ նորից շարունակւում է։

II. ՌՈՒՍԱԿԱՆ ՕՐԻԵՆՏԱՑԻՍ

1.

Երկար ու անպտուղ որոնումներից յետոյ՝ հայ քաղաքական միտքը վերջապէս իր յոյսը Արեւմուտքից կտրած, դառնում է դէպի Արեւելք, դէպի Ռուսաստան, եւ Հայաստանի ազատութեան տենչերը այժմ էլ Ռուսաստանի հետ է կապում։ Անգամ Իսրայէլ Օրիի նման համոզուած արեւմտականը, անցեալի եւ իր անձնական դառն փորձերից յուսահատ, վերջի վերջոյ հրաժեշտ է տալիս Արեւմուտքին եւ իր երկրի փրկութիւնը փորձում է ռուսական արքունիքում գտնել։

Սակայն չպէտք է մոռանալ, որ Իսրայէլ Օրիից առաջ էլ նման մէկ փորձ կատարուել էր — Յակովբ Դ. Զուղայեցի կաթողիկոսի օրով։ Ինչպէս յայտնի է՝ 1678-ի ամառը Էջմիածնում գումարուած ժողովի կողմից երկու պատգամաւորութիւն է ուղարկւում — մէկը Արեւմուտք, եւրոպական պետութիւնների դռները բախելու, իսկ միւսը, կրկին նոյն նպատակով, դէպի Ռուսաստան։

Բայց նրանից յետոյ, մեզ անյայտ պատճառներով, հայ քաղաքական մտածողութիւնը մի անգամ ընդ միշտ հրաժարւում է Ռուսաստանից եւ իր բոլոր յոյսերը բացառապէս Արեւմուտքի հետ կապում։

Եթէ հաւատանք հայ մելիքների տուած բացատրութեանը, դրա պատճառն այն է, որ հնում մեր կեանքի ղեկավարները միշտ կասկածանքով են նայել Ռուսաստանի վրայ։ Նրանք վախեցել են, թէ մի գուցէ Ռուսաստանի միջոցով ազատագրուելով, հարկադրուած լինին յունաղաւանութիւն ընդունել, որը — իրենց ասածին պէս — լի է աղանդներով ու հերձուածներով։

Թերեւս աւելի հաւանական է ենթադրել, որ Ռուսաստանը դեռ եւս նոր-նոր կազմակերպուող մէկ պետութիւն լինելով, չունէր հայ ժողովրդի աչքում այն հմայքը, ինչ որ ունէր Արեւմուտքը։ Աւելի. 16, 17 եւ մինչեւ իսկ 18 դարի առաջին կէսերում Ռուսաստանը հայ ժողովրդի համար քաղաքականապէս եղել է «մի անծանօթ երկիր», terre incognita։ Այպացոյց, որ Զամչեանի «Հայոց պատմութեան» նման ընդարձակածաւալ մէկ աշխատութեան մէջ, որը հասցուած է մինչեւ 1784 թիւը, եւ ո՛չ մի խօսք չկայ Ռուսաստանի մասին, հայերի եւ ռուսների յարաբերութեան մասին եւն. կարծէք աշխարհում Ռուսաստան անունով մէկ պետութիւն գոյութիւն էլ չի ունեցել։

Ճիշդ է, հայերը դեռ շատ վաղ ժամանակներից առեւտրական յարաբերութիւններ են ունեցել Ռուսաստանի հետ, ինչպէս նաեւ նրա միջոցով Եւրոպայի ու արեւելեան Ասիայի հետ։ Ռուս պատմագիր Կարամզինի վկայութեամբ՝ Վոլգայեան Բոլգարների մայրաքաղաքի աւերակներում — այժմեան Կազան քաղաքից 90 վերստ հեռու, Վոլգայի վրայ — գտնուել են շատ գերեզմանաքարեր Զ. եւ Թ. դարերից։ Գտնուել են նաեւ հայկական դրամներ ու ար-

---

1) Լէօ, «Հայոց Հարցի Վաւերագրերը», եր. 6, Եղեանց, «Պետրոս Մեծի Յարաբ.», եր. XIX, փաստաթուղթ թիւ 44, մեր յօդուածը՝ «Յակովբ Զուղայեցի»։